

Հավելված

ՀՀ փնտրեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2014
թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 384-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ

Երևան 2014

Բովանդակություն

Ներածություն

1. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

2. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

3. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

4. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկները

5. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթները

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի գործունեության ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացված են ամփոփ տեղեկություններ հետևյալ ուղղություններով.

- տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը,
- տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը,
- տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները,
- մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկները,
- Օրենքով սահմանված խնդիրները և գործառույթների իրականացման համար

Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթները:

Ծրագրի նպատակներն են.

1. պաշտպանել և խրախուսել տնտեսական մրցակցությունը ապրանքային շուկաներում,
2. ապահովել բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր,
3. նպաստել տնտեսական զարգացման համար բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը և սպառողների շահերի պաշտպանությանը,
4. խթանել մրցակցային մշակույթը:

Վերը նշված նպատակները համապատասխանում են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) Հանձնաժողովի առջև դրված խնդիրներին, ՀՀ կառավարության ծրագրի դրույթներին, ինչպես նաև շուկայական տնտեսության զարգացման նպատակով պետության կողմից որդեգրված հիմնարար սկզբունքներին:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը կշարունակի իրականացնել արդյունավետ, լայնածավալ և ակտիվ համագործակցություն մի շարք միջազգային կազմակերպությունների, արտերկրի մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինների, ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի հետ հետևյալ ուղղություններով.

- մրցակցության քաղաքականության կիրարկման լավագույն փորձի փոխանակում,

- օրենսդրական բարեփոխումների իրականացում, այդ թվում՝ դրանց ներդաշնակեցման միջոցով,

- թիրախային ոլորտների ապրանքային շուկաներում առկա մրցակցության իրավիճակի ուսումնասիրությունների իրականացման նպատակով կարողությունների զարգացում,

- գործընկերության ամրապնդում և համատեղ ծրագրերի իրականացում,

- մրցակցության քաղաքականության մասին տեղեկացվածության բարձրացում,

- միջազգային փորձագետների կողմից խորհրդատվության տրամադրում,

- Հանձնաժողովի աշխատակիցների համար հատուկ թեմաներով դասընթացների կազմակերպում:

Հաշվի առնելով ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը, դրանց սոցիալական նշանակությունը և նախկինում հայտնաբերված խախտումների բնույթը՝ ծրագրային տարում Հանձնաժողովն առաջնահերթ ուսումնասիրության ոլորտներում (պարենային և արդյունաբերական ապրանքներ, դեղեր, քաղաքաշինություն, ուղևորափոխադրումներ և բեռնափոխադրումներ, ծառայություններ, էներգետիկա, հեռահաղորդակցություն և այլն) կիրականացնի ուսումնասիրություններ շուկայի մուտքի խոչընդոտների, պետական գնումների ընթացակարգերի, գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացումների, հակամրցակցային համաձայնությունների բացահայտման նպատակով:

Բացի այդ, Հանձնաժողովը զուգահեռաբար կիրացնի օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները նաև քաղաքացիներից և տնտեսվարող սուբյեկտներից ստացվող բողոքների ուղղությամբ:

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Տնտեսական մրցակցության օրենսդրության տեսանկյունից ապրանքային շուկաներում մրցակցության սահմանափակումը, կանխումը և արգելումը դրսևորվում է հետևյալ ուղղություններով.

- Մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահում,
- Հակամրցակցային համաձայնությունների կնքում (կայացում),
- Գործողության մեջ դրված չհայտարարագրված կամ արգելված համակենտրոնացում,
- Անբարեխիղճ մրցակցության գործողություն,
- Արգելված պետական օժանդակություն:

Մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման ուղղությամբ

Մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից հնարավոր չարաշահումների բացահայտման գծով իրականացրած ուսումնասիրությունները փաստում են, որ կան խոշոր ընկերությունների կողմից այլ ընկերությունների մուտքը շուկա խոչընդոտելու դեպքեր:

Այսպես, հեռահաղորդակցության ոլորտում գործող «ԱրմենՏել» ընկերության կողմից լրացուցիչ պայմանների պարտադրման միջոցով «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ընկերության համար ստեղծել է շուկայի մուտքի խոչընդոտներ: Մասնավորապես «ԱրմենՏել» ընկերությունը թեև «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ընկերությանը թույլատրել է իրեն պատկանող հեռահաղորդակցության խողովակների համակարգում օպտիկամանրաթելային մալուխ անցկացնել, սակայն հետագայում ստիպել է ընկերությանը օգտվել հիմնական պայմանագրի հետ կապ չունեցող լրացուցիչ սպասարկման ծառայություններից, որոնք «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ընկերությանը խոչընդոտել են մուտք գործել շուկա: Հանձնաժողովի կողմից ձեռնարկված գործողությունների շնորհիվ խնդիրը լուծվել է և լրացուցիչ ծառայություններից օգտվելու պարտադրանքը հանվել է:

Էլեկտրաէներգիայի մատակարարման ոլորտում գործող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունը բաժանորդների համար սահմանել է (քաղաքացիներ և տնտեսվարող սուբյեկտներ) ծառայությունների մատուցման այնպիսի

պայմաններ, որոնք իրենց բնույթով և բովանդակությամբ չեն առնչվում Ընկերության և բաժանորդների միջև սովորաբար կնքվող պայմանագրերին: Մասնավորապես դիտարկվող օրինակում Ընկերության կողմից բաժանորդների էլեկտրամատակարարման իրականացման համար որպես լրացուցիչ պայման էր սահմանվել այդ շենքը կառուցապատող ընկերության ունեցած պարտքերի վճարումը, որը և բաժանորդներին հնարավորություն չէր տալիս բնականոն կերպով շահագործելու իրենց սեփականության իրավունքով պատկանող բնակարանները:

Նույնանման դեպք է «Երևան ջուր» ՓԲ Ընկերության կողմից բնակիչ բաժանորդների ջրամատակարարման դադարեցումը՝ պայմանավորված Ընկերության այն պահանջով, որ բնակիչների հետ կնքված պայմանագրերի փոխարեն անհրաժեշտ է առաջնորդվել կառուցապատող ընկերության հետ կնքված պայմանագրերով և վճարել կառուցապատողի համապատասխան պարտքերը:

Լրացուցիչ պայմանների պարտադրմամբ շուկա նոր ընկերությունների հայտնվելուն խոչընդոտելու մեկ այլ դեպք վերաբերում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող դոմեյնների գրանցմամբ զբաղվող «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊ Ընկերության կողմից իրեն վերապահված բացառիկ իրավունքներն օգտագործմանը, որը կատարվել է դոմեյնների գրանցման երկրորդային շուկայում գործող ընկերություններին լրացուցիչ գովազդային ծառայություններ պարտադրելով, որը սահմանափակել է այդ ընկերությունների գնային առումով մրցակցային հնարավորությունները: Հաշվի առնելով այն, որ նշված խնդիրները կարող են հանդիպել նաև տնտեսության մյուս ոլորտներում, Հանձնաժողովը մեծապես կարևորում է այս ուղղությամբ կատարվող աշխատանքները՝ նմանօրինակ իրավունքներ ունեցող ընկերությունների բացահայտման և նրանց կողմից մրցակցային միջավայրի հնարավոր խախտումները կանխարգելելու նպատակով:

Մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից հնարավոր չարաշահումների գծով առկա ուսումնասիրությունները թույլ են տալիս առանձնացնել նաև չհիմնավորված գնային փոփոխություններին վերաբերող խնդիրը, որի առնչությամբ Հանձնաժողովը կատարել է մի շարք ուսումնասիրություններ: Այսպես, դիտարկվել են գնային փոփոխություններ ծխախոտի, կոնյակի, հանքային ջրերի, գարեջրի և գազավորված ըմպելիքների շրջանառության բնագավառներում, որոնց

շրջանակներում դիտարկվել են «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ» ՍՊ, «Ինթերնեյշնլ մասիս տաբակ» ՍՊ, «Երևանի կոնյակի գործարան» ՓԲ, «Պոռոշյանի կոնյակի գործարան» ՍՊ, «Ջերմուկ գրուպ» ՓԲ, «Ջերմուկի մայր գործարան» ՓԲ, «Գյումրի-Գարեջուր» ՍՊ, «Երևանի Գարեջուր» ՓԲ, «Կոտայք» գարեջրի գործարան» ՍՊ և «Կոկա-կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲ ընկերությունների գործունեությունը՝ նպատակ ունենալով պարզել կատարված փոփոխությունների հիմնավորվածությունը: Արդյունքում կարող ենք փաստել, որ գնային փոփոխությունների վրա ազդեցություն են ունեցել հիմնականում արտադրության և իրացման կազմակերպմանը վերաբերող մի շարք ծախսեր, որոնք համադրելի ժամանակաշրջանների համեմատ աճել են:

Գնային փոփոխությունների հիմնավորվածության բացահայտման առնչությամբ Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև բնակիչներին բնակսպասարկման ծառայություններ մատուցող ընկերությունների գործողությունները: Տվյալ դեպքում Հանձնաժողովը ստացված դիմումների հիման վրա սկսված ուսումնասիրության շրջանակներում պարզել է, որ տվյալ տարածքում գործող միակ վերելակների սպասարկման ծառայություններ իրականացնող ընկերության կողմից առկա են սակագնային քաղաքականության չհիմնավորված կիրառման դեպքեր: Այս կապակցությամբ Հանձնաժողովի կողմից կատարված օպերատիվ աշխատանքի արդյունքում հնարավոր է եղել լուծելու բազմաթիվ բնակիչներին վերաբերող խնդիրը:

Այսպիսով, գերիշխող դիրքի չարաշահումները ապրանքային շուկաներում հիմնականում դրսևորվում են տնտեսվարող սուբյեկտների կողմից լրացուցիչ պարտավորություններ պարտադրելու, այլ տնտեսվարող սուբյեկտի՝ շուկա մուտք գործելուն խոչընդոտելու կամ շուկայից դուրս մղելու, չհիմնավորված կամ խտրական գներ սահմանելու, մրցակցային անհավասար պայմաններ ստեղծող նմանօրինակ այլ գործողությունների կամ վարքագծի միջոցով:

Հակամրցակցային համաձայնությունների կնքման (կայացման) բացահայտման ուղղությամբ

Հակամրցակցային համաձայնությունները դասվում են մրցակցային օրենսդրության խախտումների այն տեսակների շարքին, որոնց նկատմամբ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ միջազգային պրակտիկայում սահմանված են

պատասխանատվության խիստ միջոցներ: Որպես կանոն, հակամրցակցային համաձայնությունները կայացվում են այնպիսի ապրանքային շուկաներում, որոնցում բարձր է կենտրոնացվածության աստիճանը և մասնակիցների թիվը փոքր է: Հարկ է նշել, որ հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ առավել արդյունավետ է այնպիսի գործիքակազմի կիրառումը, որը հնարավորություն կտա ընկերություններում իրականացնելու անսպասելի ստուգումներ: Այս տեսանկյունից հարկ է փաստել, որ մրցակցային օրենսդրությամբ Հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակը սահմանափակ է:

Ինչպես ցույց է տալիս համապատասխան միջազգային փորձը և այս ոլորտում Հանձնաժողովի կողմից նախկինում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, հակամրցակցային համաձայնությունների առումով ռիսկային ոլորտներից է պետական գնումների գործընթացը՝ տնտեսվարող սուբյեկտների միջև մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման տեսանկյունից:

Պետական գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը և կանխարգելումը նպաստում է ոչ միայն շուկայի մասնակից ընկերությունների բնականոն գործունեության համար բարենպաստ միջավայրի ապահովմանը, այլև հանգեցնում է պետական միջոցների նպատակային օգտագործմանը և սպառողների շահերի պաշտպանությանը: Վերը նշվածի առնչությամբ, տնտեսվարող սուբյեկտների վնասները հանդես են գալիս իրացման ծավալների անկման տեսքով, իսկ պետության վնասները պայմանավորված են հավաքագրված եկամուտների օգտագործման արդյունավետության անկմամբ, իսկ սպառողների դեպքում՝ դրանք պայմանավորված են ձեռքբերված ապրանքների և ծառայությունների ցածր որակական և բարձր գնային գործոններով:

Այդ կապակցությամբ, հնարավոր հակամրցակցային համաձայնությունների բացահայտման նպատակով Հանձնաժողովը շարունակել է պետական գնումների գործընթացի ուսումնասիրությունները: Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից արդեն իսկ ուսումնասիրվել են շինարարական աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման նպատակով մի շարք պետական մարմինների և

գերատեսչությունների կողմից հայտարարված գնման ընթացակարգերը, որոնց արդյունքները հիմք ընդունելով՝ կարող ենք նշել, որ ծրագրային տարում այս ուղղությամբ Հանձնաժողովը կներգրավի ավելի մեծ ռեսուրսներ՝ սկսված ուսումնասիրություններն ամբողջացնելու նպատակով:

Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացնում նաև տարբեր տնտեսական միավորումների (ասոցիացիաների) կողմից իրականացվող քաղաքականության ուղղությամբ: Այս առումով Հանձնաժողովն արդեն իսկ ուսումնասիրել է Պահնորդական միության անդամ հանդիսացող ընկերությունների իրականացրած գործունեությունը, որի շրջանակներում չնայած մրցակցային օրենսդրության խախտումներ չեն հայտնաբերվել, այդուհանդերձ բացահայտված խնդիրները վերաբերվել են չգրանցված աշխատակիցներ ունենալուն, աշխատանքային օրենսդրությամբ սահմանված այլ պայմանների խախտումներին, պատվիրատուի նկատմամբ ստանձնած պարտավորությունների թերի կատարմանը, որոնք հնարավորություն են տվել մրցույթներին ներկայացնելու ցածր գներ: Այդ փաստերը ուղարկվել են համապատասխան գերատեսչություններին:

Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության ուղղությամբ

Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողությունը հանդիսանում է շուկաներում կենտրոնացվածության մակարդակի վրա ներգործության համար Հանձնաժողովին վերապահված հիմնական գործիքը: Հարկ է նշել, որ համակենտրոնացումները արդյունք են ոչ միայն տարբեր ընկերություններում ընդունված կառավարչական որոշումների, որոնք հաճախ պայմանավորված են գործունեության ոլորտի փոփոխության անհրաժեշտությամբ, ընկերության տնտեսական ցուցանիշների բարելավմամբ, նոր տեխնոլոգիաների ներգրավմամբ և այլն, այլ նաև ժամանակակից աշխարհում տեղի ունեցող կոոպերացման բարձր մակարդակը ինքնին ստիպում է ձևավորել վերազգային կամ ներազգային կորպորացիաներ, որոնց տիրապետման ներքո են հայտնվում նախկինում միմյանց մրցակից համարվող ընկերությունները:

Այս առումով Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական բազաների վերլուծության արդյունքում հսկողություն է իրականացվում ձեռնարկությունների փայաբաժինների ձեռքբերման խոշոր գործարքների, միացումների, միաձուլումների

նկատմամբ՝ նպատակ ունենալով կանխարգելելու մրցակցային միջավայրի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունը:

Հարկ է նշել, որ մինչ օրս շարունակում է խնդրահարույց մնալ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման համար Հանձնաժողովի՝ տեղեկատվական բազաներին հասանելիության ապահովումը: Մասնավորապես, բաժնետիրական ընկերությունների հիմնադիրների վերաբերյալ փոփոխությունները գրանցվում են ռեեստր վարող կազմակերպություններում, հետևաբար Հանձնաժողովի կողմից բաժնետիրական ընկերություններում կատարվող գործարքների, վերակազմակերպումների և վերջիններիս կողմից չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման համար տեղեկատվական աղբյուրները բացակայում են, ուստի Հանձնաժողովը զրկված է նշված գործարքների նկատմամբ վերահսկողության իրականացման հնարավորությունից և, ըստ էության, Հանձնաժողովի տեսադաշտից դուրս են մնում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերությունում և այլ ռեեստր վարող կազմակերպություններում արժեթղթերով կատարվող գործարքների և այդ գործարքները կատարած անձանց վերաբերյալ տվյալները: Այս առումով անհրաժեշտ ենք համարում գտնել համապատասխան օրենսդրական լուծումներ՝ ապրանքային շուկաներում հնարավոր խոշորացումների նկատմամբ Հանձնաժողովի կողմից ամբողջական վերահսկողության ապահովման նպատակով:

Համակենտրոնացումների նկատմամբ իրականացվող վերահսկողության ուղղությամբ վերջին տարիներին իրականացվել է զգալի աշխատանք: Մասնավորապես, Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում կայացրել է ընկերությունների կողմից չհայտարարագրված համակենտրոնացումը գործողության մեջ դնելու համար պատասխանատվության միջոցի կիրառման 4 որոշում՝ ընկերությունների նկատմամբ սահմանելով նախազգուշացում: Նույն ժամանակահատվածում ընդունվել է համակենտրոնացումների թույլտվության թվով 13 և ընկերություններին անձանց խումբ համարելու 8 որոշում:

Հանձնաժողովը 2014 թվականին շարունակել է ակտիվ ուսումնասիրությունները համակենտրոնացումների, այդ թվում՝ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման ուղղությամբ: Ուսումնասիրության են ենթարկվել ՀՀ

արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված փայաբաժնի ձեռքբերումների գործարքները, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների վերակազմակերպումները, որոնք Օրենքի համաձայն կարող են դիտվել որպես համակենտրոնացում: Միայն 2014 թվականի առաջին կիսամյակում Հանձնաժողովն ուսումնասիրել է տնտեսվարող սուբյեկտների միջև կայացած շուրջ 3000 գործարքներ և վերակազմակերպումների դեպքեր: Հանձնաժողովի կողմից 2014 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ պատասխանատվության է ենթարկվել 68 տնտեսվարող սուբյեկտ, որոնք սահմանված կարգով չեն հայտարարագրել համակենտրոնացումները: Նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից դիմումների հիման վրա հարուցված վարչական վարույթների արդյունքում կայացվել են համակենտրոնացումների թույլտվության 16, տնտեսվարող սուբյեկտներին անձանց խումբ համարելու՝ 19 և համակենտրոնացումն արգելելու վերաբերյալ 1 որոշում:

Ընդ որում, ծրագրային տարում Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են լինելու ոչ միայն հորիզոնական համակենտրոնացումները, որոնք կայացվում են միևնույն ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև, այլ նաև որոշակի փոխկապակցվածություն ունեցող կամ տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների, ինչպես նաև ֆիզիկական անձանց մասնակցությամբ՝ խառը տիպի համակենտրոնացումները: Համակենտրոնացումների նկատմամբ ամբողջական վերահսկողություն իրականացնելու համար շարունակվելու են աշխատանքները չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտմանն ուղղված արդեն իսկ արդյունավետորեն գործող մեխանիզմների ընդլայնման ուղղությամբ: Տնտեսվարող սուբյեկտների միջև կայացված գործարքների հայտարարագրումը Հանձնաժողովին հնարավորություն է տալիս պարզելու գործարքների իրականացման նպատակները, գործարքների արդյունքում կողմերի ակնկալվող օգուտները, որոնց ուսումնասիրության պարագայում է հնարավոր դառնում գնահատել մրցակցային միջավայրի վրա դրանց ունեցած հնարավոր հետևանքները:

Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտման ուղղությամբ

Անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ նման գործողություններով տնտեսվարող սուբյեկտները ստանում են

մրցակցային առավելություն, ստեղծվում են անհավասար մրցակցային պայմաններ, անուղղակիորեն խոչընդոտներ են ստեղծում այլ տնտեսվարողների կողմից շուկա մուտք գործելու համար, ինչպես նաև նպաստավոր պայմաններ են ստեղծվում բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտներին շուկայից դուրս մղելու համար: Եվ վերջապես նման գործողությունները մեծ վնաս են հասցնում սպառողներին՝ խախտելով նրանց իրավունքներն ու օրինական շահերը:

Պետք է նկատել, որ մրցակցության պաշտպանությանն ուղղված օրենսդրության մյուս ուղղությունների համեմատ անբարեխիղճ մրցակցության գործողությունները սպառողներին հիմնականում վերաբերում են ուղղակիորեն, իսկ դրանց հետևանքով ստացվող վնասները վրա են հասնում շատ արագ: Հաշվի առնելով Հանձնաժողովի սահմանափակ ռեսուրսների հանգամանքը, կարևորվում է սպառողների ակտիվ ներգրավվածությունը Հանձնաժողովի առջև խնդիրների բարձրացման հարցում: Միաժամանակ կարևորվում է Հանձնաժողովի կողմից հսկիչ գնումներ, դիտանցումներ, անհրաժեշտության դեպքում նաև ստուգումներ իրականացնելու գործիքակազմի ամբողջական կիրառումը՝ հնարավորություն ստանալով բացահայտել առկա խնդիրները և դրանց օպերատիվ լուծումներ տալ:

Անբարեխիղճ մրցակցության առավել տարածված ձևերից է տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթություն առաջացնելը: Հանձնաժողովի կողմից ինչպես 2014 թվականի, այնպես էլ դրան նախորդող տարիների ընթացքում տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթություն առաջացնելու կապակցությամբ հարուցվել են բազմաթիվ վարչական վարույթներ:

Վերջին տարիներին Հանձնաժողովում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բավականաչափ հաճախ են հանդիպում հասարակության մոլորեցմանն ուղղված գործողությունները: Մասնավորապես, Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում հայտնաբերել է զանգվածային լրատվական միջոցներով, ինտերնետային կայքերով, ռադիոյով և հեռուստատեսությամբ, SMS հաղորդագրությունների միջոցով հեռարձակվող անբարեխիղճ գովազդի շուրջ 13 դեպք, որոնք Հանձնաժողովի կողմից որակվել են հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն, և մի շարք տնտեսվարողների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ:

Նշված գործերից է «ԱրմենՏել» ընկերության կողմից իրականացված գովազդի միջոցով կատարված անբարեխիղճ մրցակցությունը: Մասնավորապես Ընկերության սակագնային պլաններից մեկը եղել է «Պարզից Պարզ» անվանմամբ, որը ոլորտում գործող մյուս ընկերության («Օրանժ Արմենիա») դիրքորոշմամբ հանդիսացել է իր «Պարզ» անվանումով սակագնային փաթեթի կրկնօրինակումը: Բացի այդ, «ԱրմենՏել» ընկերության գովազդում առկա գործողությունները «Օրանժ Արմենիա» ընկերության դիրքորոշմամբ վնասում է կամ կարող է վնաս պատճառել իրենց համբավին և գործարար վարկանիշին:

Հանձնաժողովի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ «ԱրմենՏել» ընկերության կողմից օրենքի խախտման, մասնավորապես անբարեխիղճ մրցակցության փաստն իսկապես առկա է, ինչի համար էլ վերջինս ենթարկվել է ֆինանսական պատասխանատվության՝ 20 մլն դրամի չափով:

Հանձնաժողովը բազմաթիվ տաքսի ծառայությունների վարքագծի վերաբերյալ սպառողների շրջանում առկա դժգոհությունների հիման վրա ուսումնասիրություններ է իրականացրել տաքսի ծառայությունների ոլորտում: Այսպես խնդիրը վերաբերում է նրան, որ մի կողմից հրապարակվում է սակագին, որը կախվածության մեջ է դրվում երթևեկության հեռավորությունից, մյուս կողմից այն խախտվում է նվազագույն պարտադիր վճարի կիրառմամբ, որը հիմնականում չի համապատասխանում երթևեկության հեռավորությամբ հաշվարկված գումարի հետ:

Փաստորեն, ընկերությունների կողմից ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման ընթացքում ծառայության արժեքի և բոլոր էական պայմանների վերաբերյալ լիարժեք տեղեկություններ սպառողներին չեն ներկայացվել, ինչը համարվում է Օրենքի խախտում: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված խնդիրները գրությամբ ներկայացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն՝ ոլորտը կարգավորող համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ կատարելու նպատակով:

Հանձնաժողովը նախաձեռնել է նաև ուսումնասիրություն ավտոգազալցակայանների սպասարկման ոլորտում, որի արդյունքում 13 տնտեսվարող սուբյեկտների մոտ բացահայտվել են խախտումներ:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ընկերություններին պատկանող

գազալցակայաններում բացի իրացված գազի արժեքից գանձվում է նաև հավելյալ 200-500 դրամ գումար՝ առանց այդ մասին նախապես տեղեկատվություն ներկայացնելու, ինչը կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ծառայությունների վերաբերյալ:

Փաստորեն, ընկերությունների կողմից գազալցակայաններում լիարժեք տեղեկություններ սպառողներին չեն ներկայացվել, ինչը Օրենքի խախտում է, որով էլ պայմանավորված կիրառվել են պատասխանատվության միջոցներ՝ միաժամանակ տալով խախտումները հետագայում բացառելու հանձնարարականներ:

Հասարակության մոլորեցմանն ուղղված գործողություն է նաև արտադրության երկրի վերաբերյալ շփոթություն առաջացնելը, որի գծով ևս կատարվել են ուսումնասիրություններ՝ դրանք որակելով որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Այսպիսով վերը ներկայացված խնդիրների տեսանկյունից տնտեսվարող սուբյեկտների հակաօրինական վարքագիծը հիմնականում դրսևորվում է գովազդի կամ ծառայությունների մատուցման ընթացքում գովազդվող ապրանքի կամ ծառայության վերաբերյալ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք, կամ այնպիսի տեղեկատվության ներկայացմամբ, որը սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել գովազդվող ապրանքի կամ ծառայության վերաբերյալ՝ արդյունքում խախտելով սպառողի իրավունքներն ու օրինական շահերը: Հանձնաժողովի կողմից արդեն իսկ իրականացված վարչական վարույթների արդյունքում հայտնաբերված խախտումների գերակշռող մասը վերաբերում է ծառայությունների մատուցման և ապրանքների իրացման ոլորտին, իսկ մյուս մասը սննդամթերքի արտադրության և իրացման ընթացքում օրենքով սահմանված տեղեկատվությունը սպառողին չներակայացնելուն կամ թերի ներկայացնելուն: Հարկ է նշել նաև, որ 2015 թվականի ընթացքում Հանձնաժողովը անբարեխիղճ մրցակցությանը վերաբերող վերը շարադրված խնդիրների մասով ևս շարունակելու է անհրաժեշտ աշխատանքների իրականացումը՝ դրանով նաև նպաստելով անբարեխիղճ մրցակցության դրսևորումների կանխմանը:

Մրցակցային միջավայրի վրա ազդեցություն ունեցող այլ պետական մարմինների իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ

Հավասար մրցակցային պայմաններ ապահովող միջավայր ստեղծելու առումով մեծապես կարևորվում է նաև համագործակցությունն այլ պետական մարմինների հետ, քանի որ Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները փաստում են, որ շատ դեպքերում հավասար մրցակցությունը խաթարող գործոնները ծնող պատճառները գտնվում են այլ պետական մարմինների իրավասությունների ներքո: 2014 թվականի ընթացքում Հանձնաժողովն իրականացրել է մի շարք ուսումնասիրություններ ավիացիայի, պետական գնումների շրջանակներում տպագրական աշխատանքների իրականացման, դեղերի շրջանառության և այլ ոլորտներում և դրանց արդյունքում բացահայտված խնդիրների, վերջիններիս լուծման ուղղությամբ առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրել իրավասու պետական մարմիններին: Մասնավորապես ուշագրավ են հետևյալ ուսումնասիրությունները.

Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունների շրջանակներում հատկապես կարևորվում է ավիացիայի վերաբերյալ կատարված վերլուծությունը: Հաշվի առնելով տնտեսական շրջափակման հետևանքով ՀՀ տրանսպորտային ուղիների (երկաթուղային, ավտոմոբիլային) սահմանափակված լինելը, մեծապես կարևորվում է արդյունավետորեն գործող և տնտեսության հետ մեկտեղ դինամիկ զարգացող ավիացիոն շուկայի առկայությունը: Ընդ որում, կատարված ուսումնասիրության հիմնական նպատակը եղել է ոլորտի մրցակցային միջավայրի գնահատումը ու դրա բարելավման ուղղությամբ ՀՀ կառավարությանը համապատասխան առաջարկությունների ներկայացումը: Ուսումնասիրության արդյունքներով առաջարկվել է անցում կատարել «բաց երկնքի» քաղաքականության՝ վերացնելով թռիչքների քանակներին, օդանավերի տեսակներին, նստատեղերի քանակներին վերաբերող բոլոր սահմանափակումները: Արդյունքում ներկայումս գործող ազատականացված մոդելն արդեն իսկ բերել է ուղևորաշրջանառության ծավալների ավելացմանը և տարբեր ավիաընկերությունների միջև մրցակցության խորացմանը:

Ստացված դիմում-բողոքների հիման վրա ուսումնասիրություն է իրականացվել մի շարք պետական հաստատությունների կողմից պետական գնումների շրջանակներում

տպագրական աշխատանքների կատարման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերի առնչությամբ: Չնայած այն հանգամանքին, որ ուսումնասիրության արդյունքում Օրենքի խախտումներ չեն հայտնաբերվել, այնուամենայնիվ բացահայտվել են խնդիրներ, որոնք առնչվել են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հնարավոր խախտումներին և իրենց բացասական հետևանքն են թողել մրցակցային միջավայրի վրա:

Հանձնաժողովը վերոնշյալ խախտումների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրել համապատասխան մարմիններին՝ հետագայում դրանք բացառելու նպատակով:

Դեղերի շրջանառության բնագավառում կատարված ուսումնասիրությունները վերաբերում են զուգահեռ ներմուծման համակարգին: Տվյալ դեպքում մի շարք ընկերություններ ունեցել են խնդիրներ դեղերի ներմուծման բնագավառում, որոնք բարձրաձայնվել են Հանձնաժողովում: Ինչպես ցույց տվեցին ուսումնասիրության արդյունքները, դեղերի շրջանառության ոլորտը կարգավորող լիազոր մարմիններն ընդհանուր առմամբ դեմ չլինելով դեղերի զուգահեռ ներմուծման համակարգին, նշում էին այն հանգամանքը, որ գործող իրավական կարգավորումները լիարժեք չեն ապահովում դեղի հետազոտության շղթան, ինչը դեղի կիրառման ընթացքում կարող է հանգեցնել դրա անվտանգությանն առնչվող խնդիրների: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են ՀՀ կառավարությանը՝ մի շարք օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկներով, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա խուսափել օրենքի տարաբնույթ մեկնաբանություններից և կիրառումից՝ ինչպես տնտեսվարողների, այնպես էլ համապատասխան գերատեսչությունների կողմից:

Վերոնշյալ ուղղությամբ 2015 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունն այլ պետական գերատեսչությունների հետ՝ վերջիններիս իրավասությունների և լիազորությունների կարգավորման շրջանակներում գտնվող և տարբեր ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող խնդիրների կարգավորման նպատակով:

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Ծրագրում տնտեսական մրցակցության իրավիճակին վերաբերող հիմնախնդիրները, ինչպես նաև նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակած փորձը, 2015 թվականին մրցակցային միջավայրի բարելավման նպատակով ծրագրում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են մրցակցության միջավայրի ձևավորմանը՝ դրանով իսկ նպաստելով տնտեսական զարգացման բնագավառում իրականացվող քաղաքականության արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես նախատեսվում է հետևյալ միջոցառումների իրականացումը.

- մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով ուսումնասիրությունների իրականացում՝ առավելապես ուշադրություն դարձնելով մրցակցային անհավասար պայմանների առաջացման, տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների կիրառման, տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտելու կամ շուկայից նրան դուրս մղելու, սուբյեկտների կողմից իրականացվող գնային քաղաքականության հետ կապված հարցերին (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում կամ դիմումների հիման վրա հարուցված վարչական վարույթների շրջանակներում),

- հակամրցակցային համաձայնությունների բացահայտման նպատակով ուսումնասիրությունների իրականացում առաջին անհրաժեշտության և բարձր կենտրոնացվածության ապրանքային շուկաներում՝ առավելապես ուշադրության արժանացնելով շուկայի բաժանման, ապրանքների գների չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման, տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտելու կամ շուկայից նրան դուրս մղելու հետ կապված հարցերին (Դիմումների հիման վրա հարուցված վարչական վարույթների շրջանակներում),

- պետական գնումների ոլորտում, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հայտարարվող մրցույթներում տնտեսվարող սուբյեկտների միջև մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման գծով ուսումնասիրությունների, ինչպես նաև առանձին մրցույթներում հնարավոր մուտքի խոչընդոտների բացահայտմանն ուղղված

միջոցառումների իրականացում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում կամ դիմումների հիման վրա հարուցված վարչական վարույթների շրջանակներում),

- տարբեր տնտեսական միավորումների (ասոցիացիաների) կողմից հակամրցակցային համաձայնությունների կնքման (կայացման) բացահայտման նպատակով ուսումնասիրությունների իրականացում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում կամ դիմումների հիման վրա հարուցված վարչական վարույթների շրջանակներում),

- համակենտրոնացումներին առնչվող մրցակցային խնդիրների լուծման նպատակով ուսումնասիրությունների իրականացում, այդ թվում՝ համապատասխան աշխատանքների իրականացում ինչպես տարվա ընթացքում կատարվող գործարքների, այնպես էլ նախորդ տարիներին հայտարարագրման ենթակա, սակայն չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման ուղղությամբ (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում կամ դիմումների հիման վրա հարուցված վարչական վարույթների շրջանակներում),

- անբարեխիղճ մրցակցության դրսևորումների՝ տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթության առաջացման, տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վարկաբեկման, հասարակության մոլորեցման, տնտեսվարող սուբյեկտի համբավի կամ վարկարժեքի վնասման դեպքերի բացահայտման և վերացման նպատակով ուսումնասիրությունների իրականացում գովազդի և ապրանքաշրջանառության ոլորտներում, մշտական ուշադրության կենտրոնում պահելով սուբյեկտների կողմից իրականացվող զեղչերի, տարբեր տեսակի ակցիաների, բոնուսների արդյունքում առաջացած անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում կամ դիմումների հիման վրա հարուցված վարչական վարույթների շրջանակներում),

- ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ընդլայնում, այդ թվում՝ արտադրության, ներմուծման և իրացման բնագավառում գործող ընկերությունների գործունեությանը վերաբերող տեղեկատվության հավաքագրում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում),

▪ մրցակցային մշակույթի բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացում, այդ թվում՝ բացահայտված իրավախախտումների վերաբերյալ նիստերի հրապարակայնացում, հասարակական կազմակերպությունների և բիզնեսի ոլորտի ներկայացուցիչների, զանգվածային լրատվության միջոցների և շահագրգիռ այլ մարմինների հետ համագործակցության ապահովում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում),

▪ մանձնաժողովին կից հասարակական խորհրդի շրջանակներում մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղությամբ աշխատանքների իրականացում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում),

▪ օրենսդրական փոփոխությունների իրականացման աշխատանքներին մասնակցության ապահովում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ կամ շահագրգիռ մարմինների ներկայացմամբ տարվա ընթացքում),

▪ մրցակցային օրենսդրության մասով Հայաստանի Հանրապետության Մաքսային միությանը և ԵՏՄ-ին անդամակցելուց հետո անհրաժեշտ օրենսդրության ներդաշնակեցման աշխատանքներին մասնակցության ապահովում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում),

▪ մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղությամբ միջազգային համագործակցության շրջանակներում համապատասխան աշխատանքների իրականացում (Հանձնաժողովի կամ շահագրգիռ կառույցների նախաձեռնությամբ տարվա ընթացքում),

▪ ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ փոխգործակցության ամրապնդմանն ուղղությամբ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ տեղեկատվության փոխանակում, համատեղ նիստերի իրականացում, փոխադարձ հետաքրքրություն և սոցիալական առաջնահերթություն ներկայացնող շուկաներում համատեղ ուսումնասիրությունների իրականացում և այլն (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում):

▪ հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունների, Հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքների և իրավասության շրջանակների լուսաբանման միջոցով (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում),

- մրցակցային միջավայրի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակման աշխատանքներին ակտիվ մասնակցության ապահովում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ կամ շահագրգիռ մարմինների ներկայացմամբ տարվա ընթացքում),

- ապրանքային շուկաներում կենտրոնացվածության մակարդակի նվազեցմանն ուղղված շուկայի մուտքի և դրանում ապրանքների, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժի խոչընդոտների բացահայտում և դրա լուծմանն ուղղված առաջարկների ձևավորում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում),

- ապրանքային շուկաներում փոքր և միջին ընկերությունների քանակի ավելացմանը խոչընդոտող գործոնների բացահայտում և դրա լուծմանն ուղղված առաջարկների ձևավորում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում),

- ապրանքային շուկաներում գոյություն ունեցող մրցակցային միջավայրի ձևավորման պատճառահետևանքային կապի բացահայտում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում)

- մրցակցության օրենսդրության կիրառման արդյունավետ փորձի ձևավորում՝ համագործակցելով այլ պետական մարմինների հետ (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում),

- մրցակցության կարգավորման միջազգային լավագույն փորձի վերլուծում և ՀՀ-ում դրա կիրառելիության ուղիների բացահայտում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում),

- մրցակցության պաշտպանության օրենսդրության նկատմամբ վերահսկողության իրականացում (Հանձնաժողովի նախաձեռնությամբ տարվա ընթացքում):

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, ելնելով օրենսդրությամբ ամրագրված գործառույթներից՝ Ծրագիրն իրականացվում է մրցակցության կարգավորման հետևյալ մեխանիզմների կիրառմամբ.

1. Տնտեսական մրցակցության իրավիճակի բացահայտմանն ուղղված ուսումնասիրությունների իրականացում,

2. Տնտեսվարող սուբյեկտի կողմից իրականացվող գործունեության ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովին հասանելի աղբյուրներից

տեղեկատվության հավաքագրում, հսկիչ գնումների, դիտանցումների և անհրաժեշտության դեպքում նաև ստուգումների իրականացում,

3. Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ պարզաբանումների տրամադրում,

4. Եզրակացությունների տրամադրում՝ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ընդունված փաստաթղթերի, կնքվող համաձայնությունների, պետական օժանդակությունների, ինչպես նաև համակենտրոնացումների՝ տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված օրենսդրության դրույթները խաթարելու վերաբերյալ,

5. Հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով գործարարների հետ հանդիպումների և քննարկումների անցկացում և մրցակցային օրենսդրությանը վերաբերող հարցերի քննարկում,

6. Տնտեսական մրցակցության ոլորտում խախտումների գծով ինչպես պետական մարմինների, այնպես էլ տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերի անվավեր ճանաչելու, դրանք փոփոխելու նպատակով դատարան դիմում,

7. Հակամրցակցային համաձայնությունների կայացման, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման, անբարեխիղճ մրցակցության գործողության, արգելված համակենտրոնացումները գործողության մեջ դնելու, արգելված պետական օժանդակության դեպքերում պատասխանատվության միջոցների կիրառում, այդ թվում նախազգուշացում և տուգանք:

8. Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման նպատակով դրանց բացահայտման գործում համաձայնության մասնակից ընկերություններից առաջինի կողմից համապատասխան ապացույցների ներկայացման և հակամրցակցային համաձայնության կամովին դադարեցման պարագայում նրան պատասխանատվության միջոցների կիրառումից ազատում,

9. Տնտեսվարող սուբյեկտներին զգուշացում՝ նպատակ ունենալով կանխարգելել մրցակցության օրենսդրության հնարավոր խախտումները,

10. Տնտեսական մրցակցության միջավայրի բարելավման գործընթացում պետական այլ մարմինների կարգավորման տիրույթում գտնվող խնդիրների վերահասցեագրում,

11. Միջազգային համագործակցության շրջանակներում գործընկեր երկրների մրցակցային մարմինների հետ համատեղ ուսումնասիրությունների իրականացում,

12. Նեղ մասնագիտական գիտելիքներ պահանջող ոլորտներում ուսումնասիրությունների իրականացման դեպքում համապատասխան փորձագետների ներգրավում:

IV. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ

Մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղված առաջարկների շրջանակներում կարևորվում են օրենսդրական փոփոխությունների իրականացումը, սպառողների և բիզնեսի շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացումը, Հանձնաժողովին կից հասարակական խորհրդի գործունեության շարունակականության ապահովումը, ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի բացահայտման նպատակով կատարվող ուսումնասիրությունների շրջանակի ընդլայնումը և տնտեսվարող սուբյեկտների գործողությունները կարգավորող տարբեր ընթացակարգերի՝ մրցակցային լույսի ներքո քննումը: Մասնավորապես.

1. Հաշվի առնելով շուկայական հարաբերությունների զարգացման ներկայիս տեմպերը՝ Հանձնաժողովը մեծապես կարևորում է մրցակցության օրենսդրության մշտական կատարելագործումը, որը հնարավորություն է տալիս բարձրացնել Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը: Այս կապակցությամբ, Հանձնաժողովի կողմից մշակվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը ներկայումս գտնվում է Ազգային ժողովում:

Նշված փոփոխություններով Հանձնաժողովն ակնկալում է ապահովել.

- Տուգանքի գանձման մեխանիզմների արդյունավետության բարձրացում
- Տուգանքների չափերի միասնականացում ըստ իրավախախտման ծանրության, ինչպես նաև տուգանքների կիրառման մոտեցումների միասնականացում
- Վարչական և դատական վարույթների, բողոքարկումների և պրակտիկ գործունեության ընթացքում բացահայտված բացերի, սողանցքների, կրկնությունների վերացում և հստակեցում
- Միջազգային փորձի հիման վրա մի շարք սկզբունքների, հասկացությունների հստակեցում, այդ թվում՝ գերիշխող դիրքի չարաշահումների, հակամրցակցային

համաձայնությունների մասով

- ապրանքային նշանների օգտագործման միջոցով անբարեխիղճ մրցակցության դեպքերի լրացում և հստակեցում

- պատասխանատվության միջոց կիրառելուց ազատման կամ պատասխանատվության միջոցի չափի նվազեցման վերաբերյալ մեխանիզմների ներդրում և կատարելագործում:

2. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված հաջորդ առաջարկը վերաբերում է սպառողների և բիզնեսի շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Հանձնաժողովի նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, որ հաճախ տնտեսվարող սուբյեկտները խախտում են մրցակցության պաշտպանության օրենսդրությունը՝ տեղեկացվածության ցածր մակարդակի պատճառով: Այսպես, 2013 թվականին Հանձնաժողովի կողմից ինտերնետային կայքում հայտարարության տեղադրմամբ պայմանավորված՝ էապես ավելացել են հայտարարագրման ենթակա, սակայն չհայտարարագրված համակենտրոնացումների վերաբերյալ Հանձնաժողով ներկայացված դիմումները:

Բացի այդ, հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացումը հնարավորություն է տալիս սպառողների միջոցով վերհանել և քննության առարկա դարձնել մեծ թվով խնդիրներ՝ նպաստելով նաև դրանց օպերատիվ լուծմանը:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը նախատեսում է ակտիվացնել ոչ միայն ինտերնետային կայքի, այլ նաև մամուլի հրապարակումների, տարբեր հաղորդաշարերի, սեմինար-քննարկումների միջոցով մրցակցային օրենսդրության դրույթների լուսաբանման աշխատանքներին հանրության մասնակցությունը:

3. Հանձնաժողովի կողմից մեծ կարևորություն է տրվում նաև Հանձնաժողովին կից հասարակական խորհրդի գործունեությանը, որը հանդիսանում է սպառողներին և տնտեսվարող սուբյեկտներին հուզող մրցակցության խնդիրների ներկայացման և քննարկման յուրահատուկ հարթակ: Պետք է նկատել, որ այս ուղղությամբ կատարված է մեծածավալ աշխատանք, որի շրջանակներում բարձրացված մի շարք խնդիրներ արդեն իսկ լուծվել են, իսկ այնպիսիք, որոնք գտնվում են Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից դուրս, փոխանցվել են այլ պետական մարմինների: Այս կապակցությամբ, Հանձնաժողովը շարունակելու է աշխատանքների իրականացումը նաև ծրագրային

տարում, որի արդյունքներով ակնկալվում է ուսումնասիրությունների միջոցով վերհանել դիտարկվելիք ոլորտներում առկա մրցակցային խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ կատարել համապատասխան քայլեր:

4. Ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի բացահայտման տեսանկյունից Հանձնաժողովը կարևորում է նաև կատարվող ուսումնասիրությունների շրջանակի ընդլայնումը հետևյալ ուղղություններով.

- ապրանքային շուկայում տեղի ունեցող փոփոխությունները դիտարկել ոչ թե ստատիկ իրավիճակում, այլ դինամիկ փոփոխությունների համատեքստում,

- ոչ միայն բացահայտել ապրանքային շուկայում ընկերությունների ունեցած արտադրության, ներմուծման և իրացման մասնաբաժինների ներկայիս մակարդակը, այլև այդ իրավիճակի ձևավորման իրական պատճառները,

- պարզել ապրանքային շուկայի զարգացման հեռանկարները՝ մրցակցային իրավիճակի բարելավման տեսանկյունից:

Նշված ուսումնասիրությունների շրջանակներում նախատեսվում է դիտարկել ապրանքների արտադրության, ներմուծման և իրացման ընդհանուր պայմանները՝ նպատակ ունենալով վերհանելու տվյալ բնագավառում գործող ընկերությունների գործունեությանը, այդ թվում՝ բիզնեսի զարգացմանը խոչընդոտող հնարավոր գործոնները, որոնց լուծումը կհանգեցնի ոլորտում գործող ընկերությունների քանակի ավելացմանը՝ արդյունքում խորացնելով ընկերությունների միջև մրցակցությունը:

5. Մրցակցային միջավայրի վրա ունեցած ազդեցության բացահայտման տեսանկյունից Հանձնաժողովի կողմից կարևորվում են ապրանքային շուկաներում ընկերությունների գործողությունները կանոնակարգող տարբեր ընթացակարգերի՝ մրցակցային լույսի ներքո քննումը, որը նպատակ է հետապնդում դրանցում բացահայտել մրցակցությունը խաթարող հնարավոր գործոնները և դրանք ներկայացնել համապատասխան պետական լիազոր մարմնին: Առկա փորձը փաստում է, որ հաճախ նկատվում են իրավիճակներ, երբ մրցակցային մարմինների կողմից բացահայտված խնդիրները գտնվում են պետական այլ մարմնի կարգավորման տիրույթում, թեև դրանց չկարգավորված լինելը մեծապես ազդում է մրցակցային միջավայրի վրա: Այս առումով, Հանձնաժողովում արդեն իսկ կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք վերաբերում են սպիրտային խմիչքների լիցենզավորման, արտադրության, ներմուծման

և իրացման գործընթացում առկա մի շարք խնդիրների վերանայման անհրաժեշտությանը, իսկ արդյունքները տրամադրվել են շահագրգիռ մարմիններին:

V. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Հանձնաժողովի կողմից կատարվող փոխգործակցության շրջանակներում առանձնակի կարևորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ) հետ համագործակցությունը, որի արդյունքներով կարող ենք արդեն իսկ փաստել, որ Հանձնաժողովի մասնագետների աջակցությամբ տեղի են ունեցել ԼՂՀ մրցակցային օրենսդրության մի շարք բարեփոխումներ: Հանձնաժողովների միջև իրականացվել է փորձի փոխանակում՝ ուղղված առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակի ուսումնասիրությանը՝ այդ շուկաների կենտրոնացվածության աստիճանի որոշմանը, գերիշխող դիրքի առկայության բացահայտման մոտեցումների և մեթոդաբանությունների կիրառմանը: Հանձնաժողովները համատեղ աշխատանքներ են իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառելու ուղղությամբ: Հանձնաժողովների միջև կնքված համաձայնագրի շրջանակներում իրականացվում է հավաքագրված տեղեկատվության պարբերական փոխանակում՝ հնարավորություն տալով օպերատիվորեն արձագանքելու առանձին շուկաներում հնարավոր խնդիրների առաջացմանը: Բացի այդ, համագործակցության շրջանակներում Հանձնաժողովն օժանդակել է ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ին արտերկրի մրցակցային մարմինների գործելաոճին, վարույթների իրականացման ընթացակարգերին, մրցակցության ոլորտին առնչվող իրավական նորմերին և չափորոշիչներին, ինչպես նաև աշխատակիցների մասնագիտական կարողությունների ընդլայնման գործընթացին ծանոթանալու հարցում: Հանձնաժողովի կողմից համագործակցության շրջանակներում ցուցաբերվել է նաև տեխնիկական աջակցություն՝ ուղղված ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների բարելավմանը: Վերը թվարկված բոլոր ուղղություններով առաջիկա տարիներին շարունակվելու են աշխատանքների իրականացումը, որի համար արդեն իսկ կնքվել է փոխգործակցության

եռամյա հուշագիրը:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում արդյունավետ համագործակցություն է ծավալել Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային և դոնոր կազմակերպությունների, օտարերկրյա մրցակցային կամ հակամենաշնորհային համանման մարմինների հետ: Հանձնաժողովի գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարումը:

Հանձնաժողովն իր գործունեության վերջին տարիներին երկկողմանի սերտ համագործակցություն է ծավալել, մասնավորապես՝ ԱՊՀ անդամ պետությունների, Գերմանիայի Դաշնության, Լիտվայի Հանրապետության, Ֆրանսիայի մրցակցային մարմինների և ԱՄՆ Առևտրի դաշնային հանձնաժողովի հետ: Հանձնաժողովը 2015 թվականին ևս նախատեսում է ամրապնդել առկա հարաբերությունները և քայլեր ձեռնարկել երկկողմ համագործակցության հետագա ընդլայնման համար:

Ծրագրային տարում Հանձնաժողովը շարունակելու է միջազգային համագործակցությունը նաև ինտեգրացիոն միավորումների հետ: Մասնավորապես Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացնելու Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության միացման գործընթացների շրջանակում նախատեսվող միջոցառումների իրականացման ուղղությամբ: Ամրապնդելու է համագործակցությունը Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հակամենաշնորհային/մրցակցային մարմինների հետ, մասնավորապես ստորագրված իրավապայմանագրային բազայի հիման վրա մրցակցային ոլորտին առնչվող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, փորձի փոխանակման և համատեղ միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

Հանձնաժողովը բազմակողմ համագործակցության շրջանակներում անդամակցում է Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՑ/ICN), Էներգետիկ համայնքի մրցակցության ցանց (ԷՀՄՑ/ECCN) կազմակերպություններին և ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդին (ՀՔՄԽ/MCAPI),

ինչպես նաև սերտ համագործակցում է Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD) և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (ՄԱԱԶՀ/UNCTAD) հետ: Հանձնաժողովը 2015 թվականին ևս շարունակելու է այս համագործակցությունը, որի արդյունքում կձևավորվեն և կհաստատվեն մրցակցության քաղաքականության կիրարկման և օրենսդրությունների համապատասխանեցման առումով համատեղ գործողությունների շրջանակները, լավագույն փորձը և համատեղ ուսումնասիրությունների իրականացման մեխանիզմները:

Միաժամանակ, Հանձնաժողովը շարունակելու է տարբեր միջազգային համաժողովների և սեմինարների ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության բնագավառում պետական քաղաքականության իրականացման վերջին զարգացումները և աշխատանքներ է իրականացնելու Հայաստանի Հանրապետությունում համանման միջոցառումներ կազմակերպելու գործում, ինչը տարբեր միջազգային կառույցներին հնարավորություն կընձեռի համարժեք գնահատելու երկրում մրցակցային իրավիճակի վարկանիշը և կնպաստի միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներին:

Երկրի գործընկերության ռազմավարության շրջանակներում տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրային ուղղություններից ելնելով՝ Հանձնաժողովը նախատեսում է նոր վարկային ծրագրի շրջանակներում շարունակել աշխատանքները Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ/IMF) և Համաշխարհային բանկի (ՀԲ/WB) հետ, ինչը կնպաստի անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումներին և կխթանի Հանձնաժողովի աշխատակազմի կարողությունների բարելավումն ու ոլորտային ուսումնասիրությունների իրականացումը:

Հանձնաժողովը շարունակելու է համագործակցությունը Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության հետ տնտեսական մրցակցության օրենսդրության և կիրարկման ոլորտում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի առումով՝ կապերի ամրապնդման և հնարավոր համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Հանձնաժողովը Գերմանիայի միջազգային համագործակցության (ԳՄՀ/GIZ) ընկերության հետ «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում»

ծրագրի շրջանակներում շարունակելու է բանակցությունները՝ ընդլայնելու համագործակցությունը մրցակցության քաղաքականության կիրարկման բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրի հաստատմանն ուղղությամբ: Ծրագրով նախատեսվում է ընդլայնել համագործակցությունը մրցակցության ոլորտի գործերի վարման շուրջ միջազգային փորձագետի խորհրդատվության տրամադրման, Հայաստանի Հանրապետությունում մրցակցության քաղաքականության մասին տեղեկացվածության բարձրացման, Հանձնաժողովի աշխատակիցների համար դասընթացների կազմակերպման և Գերմանիայի Դաշնության կարտելային գրասենյակի (Բունդեսկարտելամտ) մասնագետների միջև փորձի փոխանակման, ինչպես նաև մրցակցային քաղաքականության իրականացման և կիրարկման արդի խնդիրների վերաբերյալ տարածաշրջանային ֆորումների կազմակերպմանն ուղղությամբ: